



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունվարի 2024 թվականի N 116

ՏԻԳՐԱՆ-ՄԵԾ ՊՈԴՈՏԱՅԻ 55 ՇԵՆՔԻ ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԴԻՄՈՒՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Տիգրան-Մեծ պողոտայի 55 շենքի բնակիչների ընդհանուր դիմումի, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով 2023թ. նոյեմբերի 13- ին հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 13.11.2023 թվականին կազմված զեկուցագրի և արձանագրության՝ Վանաձոր քաղաքի Տիգրան-Մեծ պողոտայի թիվ 55 շենքի բնակիչների անհանգստությունը վերոնշյալ հասցեում կատարվող շինարարական և վերանորոգման փոփոխությունների փաստով և Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ 55 շենքի 29 բնակարանի բնակիչ՝ Ռուդիկ Եղիազարյանի և շուրջ մեկ տասնյակից ավելի շենքի սեփականատերերի կողմից ներկայացված 27.09.2023թ. թիվ 02-16579 դիմումի համաձայն:

2023թ. նոյեմբերի 13 - ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի հունվարի 10-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել են Տիգրան-Մեծ պողոտայի 55 շենքի բնակիչները և նույն շենքի 27-2

հասցեում շինարարություն իրականացրած տարածքի սեփականատեր՝ Արուսյակ Ղազարյանը:

Վարույթի լուսմներին պատշաճ ծանուցվել են Տիգրան-Մեծ պողոտայի 55 շենքի բնակիչները և Արուսյակ Ղազարյանը, սակայն վարչական վարույթի լուսմներին չեն ներկայացել:

Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրամադրված փաստաթղթերի համաձայն 2019թ. դեկտեմբերի 13-ին Տիգրան Մեծ պողոտա թիվ 55/27-2 հասցեում «ՖԵՆՅԱ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին տրամադրվել է թիվ 267 շինարարության թույլտվությունը: 2020թ. դեկտեմբերի 23-ին կառուցապատող Արուսյակ Ղազարյանին տրամադրվել է թիվ 399 շինարարության թույլտվությունը:

15 նոյեմբերի 2022թ.-ին կառուցապատողին տրամադրվել է 23.12.2020թ.թիվ 399 և 13.12.2019թ. թիվ 267 շինարարության թույլտվությունների համաձայն թիվ 65 ավարտական ակտը (շահագրոծման թույլտվություն):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի խնդիրներն են՝ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Յուրաքանչյուր դեպքում վարչական իրավախախտման գործ քննելիս վարչական մարմինը պարտավոր է պարզել կատարվել է արդյոք վարչական իրավախախտումը, արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության: Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Այդ հանգամանքները հաստատվում են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա, որոնք են ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատվում է վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արուսյակ Ղազարյանի կողմից Տիգրան-Մեծի պողոտա 55/27-2 հասցեում իրականացրած շինարարական աշխատանքների փաստով հարուցված վարչական վարույթը եզրափակել՝ վարչական իրավախախտման հիմքի բացակայության պատճառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունվարի 2024 թվականի N 117

ԱԼԵՆ ԼՅՈՎԱՅԻ ՔԱՌՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 9.11.2023 թվականին կազմված թիվ 25 արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Ալեն Լյովայի Քառյանը (հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 30/3) Վանաձոր քաղաքի վարչական տարածքում, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 59 շենքի դիմաց, ոչ սահմանված վայրում իրականացնում է բացօթյա առևտուր:

2023 թվականի նոյեմբերի 9-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2023 թվականի նոյեմբերի 22-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ: Ալեն Քառյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը 16.12.2023թ. ստացվել է «Հասանելի չէ» նշումով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական

վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ալեն Լյովայի Քառյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունվարի 2024 թվականի N 118

ԱՁ «ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻՒԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 20.10.2023 թվական կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «Սուսաննա Հայրապետյան Յուրիի» ԱՁ-ի գործող օբյեկտում (ՀՎՀՀ՝ 66876754, հաշվառման հասցե՝ ք.Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3, թիվ 24/6, գործունեության հասցե՝ ք.Վանաձոր, Բաղրամյան պողոտա 21/15) բացակայում է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և հանրային սենդի կազմակերպման 2023 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների համար համապատասխան թույլտվությունները:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2023 թվականի դեկտեմբերի 5-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ: Սուսաննա Հայրապետյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնները առկա չեն: Իսկ 21 դեկտեմբերի 2023թ. կրկնակի ծանուցման հետադարձ կտրոնը ստացվել է « Տեղափոխված » նշումով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական

վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

- 1.« Սուսաննա Հայրապետյան Յուրիի » ԱԶ-ի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
- 3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
- 4.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
- 3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
- 4.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունվարի 2024 թվականի N 119

ՍԱԹԵՆԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 2-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 02.08.2023 թվականին տրված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ ՆԳՆ ՈԼՄՎ Տարոնի բաժնից ստացած 28.07.2023թ. թիվ 55/3-2747 գրության համաձայն՝ Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փակուղի 1-ին նրբանցք 6 տան բնակիչ Սաթենիկ Գարեգինի Սեդրակյանի կողմից վերոնշյալ հասցեում սեփականության իրավունքով վերջինիս հանգուցիալ հայրիկին պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցվող տնտեսական սենյակի փաստով:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 11-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Վիրաբյանի, ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի Ժ/պ- գլխավոր ճարտարապետ Սուրեն Աբովյանի, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ռուդիկ Վարոսյանի ներկայությամբ և մասնակցությամբ Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փողոցի 1-ին նրբանցք, 6 տան բնակիչ Սաթենիկ Սեդրակյանի լիազորված անձ նույն հասցեի բնակիչ՝ Վահե Արթուրի Սեդրակյանի:

Վարչական վարույթի լուսմների ընթացքում քաղաքացի Վահե Սեդրակյանը հայտնել է, որ Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ թողոցի 1-ին նրբանցք, 6 հասցեի սեփական հողամասում ինքնասական կառուցել են տնտեսական սենյակ և քանի, որ նշված հասցեի տունը և հողատարածքը սեփականության իրավունքով պատկանում է Սաթենիկ Սեդրակյանի հանգուցյալ հորը՝ Ֆրունզիկ Սեդրակյանին և 21.06.2023թ. Սաթենիկ Սեդրակյանը հայցադիմում է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի և ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ եղբոր՝ Արթուր Սեդրակյանի բնակելի տան նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու և փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին (դատական գործ թիվ ԼԴ/3403/02/22), որը ընդունվել է վարույթ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին մասի դ կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սաթենիկ Գարեգինի Սեդրակյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել՝ դատարանի վարույթում միևնույն անձանց միջև միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գտնվող գործի առկայության կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության իրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 120

**<<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վանաձորի համայնքապետարանի և <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ի միջև 15.09.2023թ. կնքվել է ՀՀ ԼՄՎՀ
ԷԱԾԱՇՁԲ-23/74 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) 2310720 ՀՀ դրամ արժեքով,
պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 13.11.2023թ.:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն կատարողը պարտավորվում է նույն պայմանագրով(այսուհետ՝
Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում կատարել պայմանագրի N1
հավելվածով տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքը (այսուհետ՝ աշխատանք), իսկ
պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար: Աշխատանքի
մատակարարման ժամանակացույցը սահմանվել է նույն պայմանագրի N2 հավելվածով:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման 06.12.2023թ, թիվ 132-2 արձանագրությամբ
ի հայտ է եկել, որ <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից
ստանձնած պարտավորությունները՝ դրա հիման վրա <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ն և <<ԹԵՎԱՆՅԱՆ>>
ՍՊԸ-ին սպասարկող բանկին ծանուցվել է այն մասին, որ 10-օրյա ժամկետում պետք է վճարվի
պայմանագրի և որակավորման ապահովումները: Սակայն 10-օրյա ժամկետում վճարումները չեն
կատարվել:

Հիմք ընդունելով՝ Վանաձորի համայնքապետարանի և <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ
ԼՄՎՀ ԷԱԾԱՇՁԲ-23/74 ծածկագրով պայմանագիրը, (այսուհետ՝ Պայմանագիր) ղեկավարվելով
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> պարբերությամբ **որոշում**
եմ.

1.<<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող
մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 121

«Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ 5Ա ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ
ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 18.01.2023թ. թիվ Հ-5Ա-5/1-19-01-24 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994 որոշմամբ հաստատված կարգի 78-րդ և 80-րդ կետերով՝ որոշում եմ.

Թույլատրել «Վ.Դանիելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ 5Ա միկրոավտոբուսային երթուղին համալրելու GAZ 322132 մակնիշի 37 CQ 896 պետհամարանիշի, դեղին հիմնագույնի համարանիշ՝ 0426 L, միկրոավտոբուսով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


22 հունվարի 2024 թվականի N 122

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-033-0054-001) ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Վասիլի Սարգսյանի 08.01.2024 թվականի թիվ 253 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1876189 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 23.07.2009 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 3045 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք գյուղ Դարպասում գտնվող (ծածկագիր: 06-033-0054-001) հողամասին և բնակելի տանը՝ տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս, 1-ին փողոց, 71 բնակելի տուն հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 123

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՅԿ
ՄԱՐՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ
ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 22 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1641 որոշումը և 11 հունվարի 2024 թվականի թիվ 64 որոշումը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 8-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ **ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Մարտունի Վիրաբյանին (պաշտոնի ծածկագիր՝ 1.1-1) շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 124

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1537 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսանա Մկրտիչի Չախալյանի և Ժուժունա Ռուբենի Չախալյանի 12.01.2024 թվականի թիվ 02/670 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 02 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1537 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 17.11.2023 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17112023-06-0085 որոշումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 նոյեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 18/2 հասցեում գտնվող, Սուսանա Մկրտիչի Չախալյանին և Ժուժունա Ռուբենի Չախալյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու մասին» թիվ 1537 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետում «81.1քմ» բառերը փոխարինել «70.63քմ» բառերով:
2. Որոշման 2-րդ կետում «81.1քմ» բառերը փոխարինել «70.63քմ» բառերով, «159690 (հարյուր հիսունինը հազար վեց հարյուր իննսուն)» բառերը փոխարինել «139080 (հարյուր երեսունինը հազար ութսուն)» բառերով:
3. Վանաձոր համայնքի ղեկավարի 02 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1537 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագիծով:
4. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 02 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1537 որոշմամբ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը (159690-139080)՝ 20610 (քսան հազար վեց հարյուր տասը) դրամ գումարը վերադարձնել Սուսանա Մկրտիչի Չախալյանին և Ժուժունա Ռուբենի Չախալյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 125

«ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից կազմված զեկուցագրի և ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ԼՄ վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի կողմից ուղարկված 17.11.2023թ. թիվ 55/3-4268 գրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից կազմված զեկուցագրի՝ Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 34 հասցեում «Հոփսիկ Էմինի Կարապետյան» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը Գրիգոր Լուսավորիչի փողոցում անհատ ձեռնարկատեր «Ռուզաննա Ղազարյան Արմավիրի»-ը ոչ սահմանված վայրում իրականացրել է անօրինական բացօթյա առևտուր:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորյալմբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակահրավակական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները և բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24:00-ից հետո աշխատեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով: Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 219¹-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Հոփսիկ Էմինի Կարապետյան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի

169.16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.«Հոփսիկ Էմինի Կարապետյան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվարի 22
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N126

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
410 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի թիվ 410 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29032023-06-0072 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Արշակ Լևոնի Մանուկյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 410 որոշումը, 23.03.2023թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15 պայմանագիրը համարելով լուծված:

2. Համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող՝ Տիգրան Մեծի պողոտա 12/3 հասցեում գտնվող 06-001--0341-0088 ծածկագրով 0.001645 հա մակերեսով հողամասը ըստ Վանաձոր համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 18-ի թիվ 56-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի՝ գտնվում է բնակավայրերի խառը կառուցապատման գոտում:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12/3 հասցեում գտնվող հողամասի վճարների վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N127-Լ

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-դ կետով, հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2023թ. հունիսի 16-ի N 647-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 25-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 07.11.2023թ. թիվ ԳՍ/13.2/34082-2023 և ՀՀ Լոռու մարզպետի 10.01.2024թ. թիվ 01/110.3.4/00207-2024 գրությունները՝ **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հունվար 22
ք. Վանաձոր

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի 2024թ.

հունվարի 22-ի թիվ 127-Լ որոշման

ԿԱՐԳ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների (այսուհետ՝ «Ծառայողական օգտագործման համար») նշումով ներքին գործավարության կազմակերպումն ու իրականացումը:

2. «Ծառայողական օգտագործման համար» (այսուհետ՝ «ԾՕՀ») նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետը (այսուհետ՝ «Քարտուղարություն»)՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

3. Համակարգում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat) կամ «ՂԷԱ Մարիամ» (GHEA Mariam) տառատեսակներով:

4. Համակարգում փաստաթղթերի վավերացումն իրականացվում է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման միջոցով՝ բացառությամբ այն մարմինների, որտեղ ներդրված չէ համակարգը կամ ժամանակավորապես չի գործում:

5. Էլեկտրոնային ստորագրության վավերության դեպքում փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը համարժեք է թղթային տարբերակին: Օգտվողի անունով Համակարգում կատարված ցանկացած մակագրություն (նշագրում, գրառում) համարժեք է փաստաթղթի վրա կատարած մակագրությանը (նշագրմանը, գրառմանը):

II. ԾՕՀ ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԸՆՉՈՒԹՅՈՒՆԸ

6. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտահոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:

7. Համայնքապետարանի քարտուղարությունում «ԾՕՀ» նշումով տեղեկություններին

առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է Քարտուղարության պետը՝ կախված աշխատանքների ծավալից:

8. Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար իր ստորաբաժանումից առաջադրում է «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների տվյալներ, որը հաստատում է Համայնքի ղեկավարը:

9. Համայնքապետարանի ղեկավար կազմից «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնները որոշում է Համայնքի ղեկավարը:

10. Յուրաքանչյուր ստորաբաժանման «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար պատասխանատու է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:

11. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնատար անձանց փոփոխության դեպքում ստորաբաժանումների ղեկավարները եռօրյա ժամկետում տեղեկացնում են Քարտուղարության պետին:

12. «ԾՕՀ» նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժինը, որը պարբերաբար Քարտուղարության պետին, իսկ Քարտուղարության պետը Համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում տեղեկատվություն:

III. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՄՏԻՑ ԵՎ ԵԼԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

13. Համայնքապետարանի աշխատակազմում «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է համաձայն Համայնքի ղեկավարի 17 փետրվարի 2016թ. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներքին գործադարության կարգը հաստատելու մասին» թիվ 118-Ա որոշմամբ:

14. Համակարգի «Վերնագիր» բաժնում, ինչպես նաև «ԾՕՀ» նշումով մտից և ելից փաստաթղթերի վերին աջ անկյունում կատարվում է «ԾՕՀ» գրառումը:

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԾՕՀ» ՆՇՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ

15. «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը որոշում է այդ փաստաթուղթը կատարողը և ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

16. Արգելվում է «ԾՕՀ» տեղեկության շարքին դասել՝

- 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների,

իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև անձանց իրավունքները և ազատությունները, դրանց իրականացման կարգերը սահմանող իրավական ակտերը,

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի քննարկման և դրանց արդյունքներով որոշումների կայացման կարգերը,

3) սահմանված կարգով քննարկված իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի վերաբերյալ կայացված որոշումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

4) անձանց իրավունքների, ազատությունների, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահվում են գրադարանների բաց ֆոնդերում կամ կազմակերպությունների բաց տեղեկատվական համակարգերում,

5) բյուջեի կատարման, տնտեսության և բնակչության կարիքների վիճակի մասին տեղեկությունները,

6) մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,

7) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները,

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները,

9) պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները:

Վ. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Համակարգում ներառված «ԾՕՀ» նշումով ցանկացած փաստաթղթի հասանելիության նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել մինչև հինգ տարի ժամկետով:

18. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվելու իրավունք ունեցողները ցանկացած ժամանակ Համակարգից կարող են մտից կամ ելից համարներով գտնել միայն իրենց վերաբերելի փաստաթղթերը:

19. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ «ԾՕՀ» նշումով, սակայն իրեն չվերաբերող փաստաթղթերին Համակարգից օգտվողը կարող է ծանոթանալ միայն Համայնքի ղեկավարի կամ Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ՝ իր կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա:

20. Հինգ տարին լրանալուց հետո «ԾՕՀ» նշումով տեղեկության հասանելիության

նկատմամբ սահմանափակումները հանվում են:

21. Համակարգում պահպանված՝ արխիվացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով փոխանցվում են Համայնքապետարանի աշխատակազմի կողմից ստեղծված և վերջինիս կողմից վարվող արխիվ:

22. Համայնքապետարանում ստեղծված արխիվում փաստաթղթերը պահպանվում են 10 տարի ժամկետով:

«ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

23. «ԾՕՀ» նշումով տեղեկությունը չի կարող հրապարակվել (տարածվել) առանց այդ տեղեկությունը պարունակող փաստաթուղթն ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվության:

24. «ԾՕՀ» նշումով տեղեկության հրապարակումը տեղեկությունների հրապարակումն է այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահվել են ըստ ծառայության, աշխատանքի կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով, ինչի հետևանքով դրանք հայտնի են դարձել այլ անձանց:

25. «ԾՕՀ» նշումով տեղեկություններ պարունակող փաստաթղթերի կորուստը փաստաթղթերի վերահսկման կորուստն է (այդ թվում՝ ժամանակավորապես) պատասխանատու անձի տիրապետությունից, որին դրանք վստահվել էին ըստ ծառայության կամ աշխատանքի, և հետևանք է դրանց հետ վարվեցողության ընթացքում սահմանված կարգի խախտման, որի պատճառով այդ փաստաթղթերին դարձել են կամ կարող են իրազեկ դառնալ կողմնակի անձինք:

26. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրանք հայտնաբերող պաշտոնատար անձը դրա մասին զեկուցում է Աշխատակազմի քարտուղարին և Համայնքի ղեկավարին:

27. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով Համայնքի ղեկավարի որոշմամբ կարող է նշանակվել ծառայողական քննություն:

28. «ԾՕՀ» նշումով տեղեկություն հրապարակած անձանց նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 128

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
409 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի թիվ 409 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29032023-06-0022 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Արշակ Լևոնի Մանուկյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 409 որոշումը, 23.03.2023թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 16 պայմանագիրը համարելով լուծված:

2. Համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող՝ Տիգրան Մեծի պողոտա 12/2 հասցեում գտնվող 06-001-0341-0087 ծածկագրով 0.001645 հա մակերեսով հողամասը ըստ Վանաձոր համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 18-ի թիվ 56-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի՝ գտնվում է բնակավայրերի խառը կառուցապատման գոտում:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12/2 հասցեում գտնվող հողամասի վճարների վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 129

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1721 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 16 օգոստոսի 2021 թվականի թիվ 1721 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25102021-06-0078 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 16 օգոստոսի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Մ. Խորենացու փողոց թիվ 6-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Լիլիա Հայկի Կիրակոսյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 1721 որոշումը, 15.10.2021թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 578 պայմանագիրը համարելով լուծված:

